


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրանք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասանման
Տարեկան ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ
ԴԵՆԴԻՍ
20

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը : Ծա-
կնոցման տողը 10 Սանդիս : Երու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիս :
Չհրատարակուած գրութիւնը եւ չսրմիւր :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

Սեպ. 25 Հինգշաբթի օրը Կ. Պոլսոյ
Ազգային Հիւանդանոցի Ս. Փրկչի մատրան
մէկ մասը այրեր է : Սոյն հրդեհին առթիւ
եկեղեցական զարդեր ու գորգեր ալ այրած
են. իսկ աւանդատան խորանին վրայի ար-
ծաթապատ Ս. Աստուածածնայ փոքրիկ պատ-
կերը մազապուր ազատուած է բոցերուն
մէջէն :

Թայմրզ կ'ըսէ թէ, Լորտ Սոլըզպէրի
նամակ մը ուղղելով Ուէսթմինսթրի Դուք-
սին՝ անոր հոգածութիւնը հրաւիրեր է Պուլ-
կարիոյ հայ գաղթականներուն խղճալի վի-
ճակին վրայ որ մեծապէս կը կարօտի դը-
րամական նպաստի :

Սրանհասրէ Կ. Պոլսոյ թղթակիցը
կը հաղորդէ սեպ. 22 թուականաւ թէ հինգ
հարիւր հայեր դէպ ի ներքին գաւառները
դրուեր են ընդ հսկողութեամբ :

Անցեալ կիրակի Վառնայէն մեկնող շո-
գենաւով 125 երկսեռ գաղթականք վերա-
դարձան ի Պոլիս :

Հայ ազգի ահանաւոր պատկերհան
բոթէսոր Այվազովսքի սեպ. 26 ուրբաթ օրը
իր Զօբելեանը տօներ է : Այս առթիւ շատ
մը խնդակցական հեռագրեր ու նուէրներ
ստացեր է, որոց մէջ առաջինն է եղեր Չա-
րին յոյժ բարեացակամ մէկ Ուքալն, որով
առաջին կարգի Աղէքսանդրի Նեւացւոյ պա-
տուանշանը կը շնորհէ մեծանուն արսւես-
տագէտին : Զօբելեանը իր պատկերհանու-
թեան ասպարէզին 60րդ տարւոյն լրումն է :

ՎԱՌՆԱՅԻ
Ա.Ղ.ՔԱՏԱԽՆԱՄԸ

Շատ սրտոտես ըլլալու պէտք չկայ, իս-
կոյն հասկնալու համար ա՛յն յարաճուն թըշ-
ուառութիւնն ու չքաւորութիւնը, որ ամեն
ժամ ու ամեն րոպէ կը պարզուի մեր աչ-
քին առջև, ա՛յն կեդրոններուն մէջ մանա-
ւանդ, ուր հայ գաղթականութիւնը խիտ

առ խիտ դիզուած է իրարու վրայ : Հոս վտիտ, գունաթափ մայր մըն է որ իր անթի թի երախային աղեսարչ ճիշերուն ահանջ կը խփէ արցունքոտ աչքերով. հոն վաւակաց հայր մըն է որ թեւերը կը գալարէ իր բազմանդամ ընտանիքին պատառ մը հաց ճարելու անկարողութենէն շուարած . այս պատկէլը ամեն տեղ, ամեն կողմ կը տեսնուի ահնելու. մենք չենք ուզեր ծանրանալ այս կէտին վրայ, գիտնալով որ արդէն անծանօթ բան մը չէ մեզի համար :

Մնաց որ, եթէ թշուառութիւնը այսօր քան ընդհանուր համեմատութիւններ կ'առնէ հետզհետէ քաղաքին մէջ, ուրիշ ահաւոր ճիւղ մըն ալ կայ որ ամեն տեղ ու ամեն վայր կը ցցէ իր վիթխարի դուխը, իր անկուշտ ստամոքսին կեր որոնելով. — ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ է այն, անբաժանելի ընկեր թշուառութեան : Երբ այս երկուքը կը պըտտին թաղէ թաղ, փողոցէ փողոց, արիւնոտ նախճիրներ թողլով իրենց ետեւը, բնական է որ մենք արեւակից եղբայրները այդ թշուառ էակներուն, քիչ մը աւելի լրջօրէն խորհինք ատոնց վիճակին վրայ :

Անտարբերութիւնը, սառնասրտութիւնը ոճիր մըն է այսպիսի պարագաներու մէջ. անցեալ տարի օտար մարդասէրներ որքա՞ն վեհանձնութեամբ խաչին իրենց սիրտն ու բսակը, որքա՞ն սրտաբուխ խանդաղատանքով խնամեցին մեր հիւանդները ու ախտաժէտները :

Այո՛, պէտք է որ քիչ մը աւելի լըրջօրէն խորհինք ատոնց վիճակին վրայ . ի՞նչ պիտի ընեն այդ թշուառները, երբ ձմեռը վրայ հասնի, երբ ձիւնն ու փուքը իր բոլոր ուժնութեամբ գայ պաշարել անոնց գետնայարկ հիւղակները, ուր անասունն իսկ չի հաճիր բնակիլ :

Ահա այս է օրուան մտաւանդութիւնը : Տեղույս Աղբաթախնամը, որ նպատակ ունի չբաւոր հիւանդներու բժշկ, գեղ և մոռնդ մատակարարել, իր պարտականութիւնը կը կատարէ, որչա՞փ որ կը ներեն իր

միջոցները . բայց անկէ աւելին կարող չէ ընել, թէ՛ շատեր, միամտաբար թէ գիտակցութեամբ, կը պահանջեն որ Աղբաթախնամը օգնէ թշուառներուն, անոնց բազմատեսակ պէտքերուն գոհացում տայ . բայց ահկայ կը նշանակէ անկարելին խնդրել : Աղբաթախնամը իր հաւաքած տաւանոցներով, իր նպատակին իսկ հաղիւ կրնայ բաւարարուլ թիւն տալ, իսկ անի՛ք դուրս, ջլատել է անոր գործունէութիւնը :

Արդէն, ինչպէս կը տեղեկացնեն մեզ, այս օրերս ստիպուած է աւժամանակեայ դադարում մը տալ իր գործառնութիւններուն, պատճառ . որովհետեւ դրամ չկայ ու պահանջները կը մնան դիլուած ու անգանձելի :

Մենք կը յորդորենք աղբաթախէր հասարակութիւնը թե ու թիկունքը ըլլալ այս ազգօգուտ հաստատութեան, որպէս զի գէթ հիւանդութիւնը չգայ գործել իր տնտեսական մեղքը, քանդուքները մեր արդէն ծիւրած մարմնոյն վրայ, ու այսպէս, գէթ մասով մը կատարած ըլլանք մեր պարտականութիւնը, պարտականութիւն, զոր կը թելադրեն մեզ խիղճը, գութը և մարդասիրութիւնը :

Ո՛վ որ ահանջ ունի, թող լսէ :

Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏՕ-ԳԹ. Ե. ԹՈՎԱԾԱՍԵԱՆ

Այս անգամ իւր բնակութիւնը տեղափոխած է Գուժ գաբու, Առաջին Ուշասթ թիւ 195, (նախկին Արծրունեան վարժարանը) ուր ըստ առաջնոյն կընդունի հիւանդները ամէն օր առաւօտեան ժամ 10էն 12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5 : Չորեքշաբթի օրերն կէս օրէն վերջ ժամը 2էն 5 ձրիապէս կը դարմանէ :



ԶԵԿՈՅՑ

Տխար Յ. Չաքըրեան ներկայիս կը ծա-
նուցանէ թէ, ցարդ Տաւրուսը չի հրատա-
րակելուն պատճառը իր վրայ եկած անակնկալ
հիւանդութիւնն էր:

Յուսայի է որ քիչ օրէն բոլորովին ա-
պաքինուած՝ կը սկսի հրատարակել իւր
թերթը:

Պ Ա Յ Թ Ի Ի Ն Մ Ը

Բաղրիէն թարգմանուած:

Ինչպէս յայտնի է, անցեալները ֆրանձ
Եօգէֆ կայսրը վախճելով Բ. կայսրը դիմաւո-
րելու համար Բէշթայի երկաթուղոյ կայա-
րանը գացած էր: Երկու կայսրերը նոր նըս-
տած էին կառքին մէջ և կը պատրաստուէին
մեկնիլ կայարանէն, երբ բազմութիւնը իրար
անցաւ սաստիկ պայթիւն մը լսելով: Միև-
նոյն ատեն, թանձր ծուխ մը և փոշիի ամպ
մը նշմարուեցաւ կայարանին շէնքերուն և-
տեէն բաւական բարձրութեամբ: Հետաքը-
րիրներու բազմութիւնը տակնու վրայ եղաւ
ու խզեց զինուորական ու ոստիկանական շըղ-
թան:

Անթարթի մէջ երկու կայսրերուն հե-
ծած կառքը շրջապատուեցաւ ահաբեկ ան-
ձերէ որոնք ամեն արգելք կը խորտակէին
փախչելու համար:

Աւստրիոյ կայսրը, յուզուած ոտքի ե-
լաւ ու ձեռքով նշան ըրաւ ներկաներուն՝
զանոնք ապահովելու համար, միեւնոյն ա-
տեն բարձրաձայն հրամայելով ոստիկանու-
թեան որ ժողովուրդը ետ մղեն:

Իշխանութիւնը մեծ ջանքեր ըրին գէպ-
քը ծածկելու համար: Առաջին վայրկեանէն
խիստ հսկողութիւն դրուեցաւ բոլոր հեռա-
գիրներուն վրայ: Լրագիրները հրաման ըս-
տացան բան չի գրել: Հակառակ ոստիկա-
նութեան պահած լռութեան, կը կարծուի
թէ պայթուցիկ մեքենայ մը պատրաստուած
է եղեր օդը հանելու համար այն կառու-

թումբը որով կը ճամբորդէր Գերմանիոյ կայս-
րը, միայն թէ ուշ պայթեր է:

Վիէննայի մէջ հրատարակեալ Ռայ-
խշֆրէնէր լրագրոյ այն թիւը որ կը պարու-
նակէր այս դէպքին լուրը, գրաւուեր է վի-
էննայի ոստիկանութեան կողմէ:

Բազմութիւն ընկերվարականներ ձերբա-
կալուած են:

Բ Ո Ժ Ո Ժ Ի Կ Ե Ա Ն

ՀԱՐՑԱՐԱՆ

Սիրելի ընթերցողք,

Կրնա՞ք ցուցնել ինձ,

1. Պահք բռնող վարդապետ մը.

2. Խաւմիկ չընող խոհարար մը.

3. Ուղղութիւնը յարդող նպարավա-
ճաւ մը.

4. Ամեն մէկ թօք նետելուն՝ խանու-
թիւն թօքերը չաւելցնող մանիֆաթուրաճիի
խանութպան մը:

5. Ճշմարտախօս միջնորդ մը.

6. Նորաձեւութեան չի հետեւող կին մը.

7. Հալը վախթը տեղը վարժապետ
մը, յիշեսցուք և զլրագրապետ մը.

8. Բանբասանք չընող կին մը.

9. Խղճահար գինեպան մը.

10. Խըվաղըվըւ չընող գրագիր մը.

11. «Քեզ պիտի առնեմ նօնօշ» ը-
սելով մէկ երկու օրիորդ չի խաբող երիտա-
սարդ մը.

12. Հարսին հետ սիրով վարւող կես-
ուր մը, նոյնպէս փեսին հետ հաշտ ապրող
զոքանչ մը.

13. Հայհոյութիւն չընող կառապան
մը, բեռնակիր մը ու նաւավար մը.

14. Ունեցած տարիքը ճշգրտէն խոս-
տովանող կին մը.

15. Երկու օձիքը մէկտեղ եկած խո-
ղամուլ մը.

Եթէ կրնա՞ք ցուցնել, ձեռուընիդ և՛
պագեր:

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԲ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ԳԼՈՒԽ Բ.

ՆԱՄԱԿԸ

Ղազիկը վաժարան դրուելով՝ Աստիւր աղայի սրտին վրայէն մեծ բեռ մը վերցուած էր, ասոր համար առաջուրնէ աւելի գոհ և զուարթ կ'երևէր:

Նոյն շաբթուան չորեքշաբթի օրը առաւօտէն սկսեալ անձրև մը կը տեղար 'ի Պոլիս. շուկայի խանութպանք մեծաւ մասամբ պարապ նստած էին առ 'ի չգոյէ յաճախորդի որ անանկ օգերուն դուրս չենէր. մինակ հովանոցավաճառք առուտուր կընէին, որովհետեւ ասոնց յաճախորդներուն մեծագոյն մասը՝ կոտրած հովանոցնին՝ անձրև և կած օրը շինել տալու կ'ենէին:

Մեր Աստիւր աղայն ալ խանութը նրստած՝ գլուխը բերելու ժամանակ չունենալով կաշխատէր, զի մէկ քանի յաճախորդներ խանութին առջեւ կը սպասէին՝ կոտրած հովանոցնին նորոգել տալու համար:

Նոյն միջոցին ժամը 5 կը զարնէր: Թըղթատարանի ցրուիչը նամակ մը բերաւ ձգեց Աստիւր աղայի խանութը, հետեւեալ հասցէն բարձրաձայն կարդալով.

«Տիւսիւսթասէ Աստիւր աղայա վիստոյ»

և և մեկնեցաւ:

Աստիւր աղայն յաճախորդները ճամբելէ ետքը նամակին պահարանը խնց, բայց չի կրցաւ նամակը կարդալ, զի այն վայրկեանին յաճախորդ մը ձեռքի հովանոցին կոտրած մէկ թէլը շինելու համար զայն դէպի անոր երկնցուց:

Աստիւր աղայն նոյն յաճախորդն ալ ճամբելէ ետքը նամակը ձեռք առաւ:

Պատճէն նամակի.

Վերապայտական Աստիւր աղա բարեկամիս սէր 'ի սրտէ.

Գիր թարիսէս 5 օր էաջ, Մարտ օնալթը թարիսի սիրոյ գիրդ խապուլ արած վէ խաթին մօրկանդ ու հարսաիդ մէմնոնիյէթի մաւճիպ էղեր էաք:

Հըմայեկս մեղաւորս ալ, վախտէ չուղելով՝ անձախ խաթին մօրկանդ ըրած իճպարներուն չի դիմանալով անոր թաթափէն պիլ վէքեալէ, ձեռքերս ու ոտներս գողալով կու գրիմ ուր՝ բէճէպի շէրիֆի 10ին ձեր հարսան, Աղիդ հանումը, իրեք օր չիչէկի իլլէթէն մուղտարդալ ըլլալէն սըղրա՝ առ Աստուած փոխեցաւ.....

Կայծակէ զարնուածի մը պէս Աստիւր աղային գլուխը սրտին վրայ ինկաւ, նամակը ձեռքէն սահեցաւ եւ աչքերը արցունքով լեցուեցան:

Քանի մը վայկեան աչքերը նամակին վրայ յառած մնացին, բարեբաղդաբար այն միջոցին բարեկամ հայրենակից մը խանութ եկաւ.

— Բարեւ Աստիւր աղայիս.

— Բարին արեւդ, մրմաջ Աստիւր աղա գլխակոր:

Նորեկը, որ ապուշ մէկը չէր, անմիջապէս հասկցաւ իր բարեկամին տրսմութեան մէջ ըլլալը, ուստի տխուր ձայնով մը հարցուց:

— Աղայիս ադ միճազսըղութան սէպէպը ի՞նչ տըլլի.

— Էֆէնտըմ, տունս է քայվեր, պատասխանեց Աստիւր աղա, սրտին խորկն հառաչանք մը արձակելով:

— Ի՞նչ կըսիս աղա. պոռաց բարեւ կամը.

— Պէլի, Մարտ օթուղ պիր թարիսով 2որ թիւթնց Դամիանոս աղան կու գրէ ուր՝ բէճէպի շէրիֆի տասնին մեր հարսան թէրքի տաղտաղայի տիւնեա արեր է չիչէկի իլլէթէն:

— Լուսաֆօբին աշխատա էղած չէ՞ր մի
հա :

— Այո խոստուսը չի գիտիմ :

— Էֆենտըմ, Աստուածպետականութի-
նը աղայիս մէկ օրը հաղար անէ . անոր
օրերը ձեզի տէ՛վր ու թէսլիմ անէ : Ի՞նչ կրնանք
ընել էֆենտըմ, «Տէր ետ եւ տէր էառ»,
կըսէ Դաւիթ . պինտէնալէյհ, անցած շաբ-
թուս իւրիւսնօմէի Մոսիսին մէջ զայտ էղած
համասիսը շիտտակ է եղեր :

— Ի՞նչ էր գրեր ուր .

— Ահայ քաղաքին վէ ճիվար գեղերուն
մէջ չիէք իլլէթին մեյտան գալուն վրայօք
զայտ մի նետեր էր . շաթալ խանի խէյֆէն
մեր հէմշերինը կարգացին :

— Ա՛խ , աս քէտէրը ինձի գալու չէր ,
ախշըրքին էրեսը ինկիլիզի ախշինի պէս
պայվական հարստի մը սահապ էղեր էանք,
ան ալ ձեռքէ փախուցանք :

— Էֆենտըմ, վախտե՛ք շատ շիտտակ է
ըսածդ ըմմա՛ ի՞նչ կրնանք ընել , ադ քէտէ-
րովդ անձիդ պայվականիդ զիյան տիբերես,
կէնէ կըսիմ թը՝ Տէր եւ տէր էառ . մատէմ
քի ախշարք էկինք՝ մինպահաթ օր մին ալ
թախլան տի նետինք : Հըմայեկս րամմանքիդ
պիրինձի վաճիպէի զիմման է գիշերս քանի մը
գլուխ Զէն հոգեւորն ու Նարեկացին կարգալ
անոր ֆօքուն հըմար :

— Ադ մուխատտէս վաղիֆէնիս իյֆա տի
անինք :

— Պախուսուս , կենդանի աղօթքը բա-
րեխօս, Տէր Պէյրօսը կըսէր ուր՝ ըմմէն բանի
մէջ աստուածպետականութեան մուսաը կայ,
հէլպէթտէ խայըրլը տըլլի : Գիտի՛ս, անցածներս
մեղաւորիս տէրտէշմիշ կուլլայիր ուր՝ կէրէք
էրկիրը կէրէք ֆէօս մէսարիֆի քիւլլիյէյէ
թէսաաիլֆ արած ես , հըմայեկս իշթէ աղա-
տեցար . խաթուն մարիկդ ալ բրօշդ բով կե-
հայ կը նստի . րամմանքդ ալ արթըդ էրկ-
րին տաղտաղայէն աղատեցար գնաց :

— Վախտե՛ք տա ըսածդ ալ շիտտակ է :

— Պինտէն ալէյհ, հայտէ Եէնի ճա-
միին մէյտանի խէյֆէն էրթանք օւր՝ բէյ մի
տէֆիկամ լլլիւ :

Աստիւր աղայն համակերպեցաւ բա-
րեկամին առաջարկին և երկուքն ալ վերո-
յիշեալ սրճարանը գացին մէյ մէկ սուրճ
առնելու :

Երկու ժամ ետքը, Աստիւր աղայն իր
խանութին մէջ, ցաւակցութիւննին յայտնող
քաղաքացիներուն այցելութիւնը կ'ընդունէր ,
որոնք նոյն օրուան թղթատարով քաղքէն ե-
կած իրենց նամակներէն տեղեկացած էին
հարստին մահը :

Նոյն գիշերը Աստիւր աղայն Ղազիկին
ու Դանիկին հետ Զէն հոգեւորն ու Նարե-
կացին մէկ քանի գլուխներ կարգացեր էին
ի հանգիստ հանգուցեալ տիկնոջ հոգեւոյն :

Երկու օր ետքը ամեն բան մոռցուած
էր : Աստիւր աղայն առաջուան պէս ուրախ
զուարթ կ'երևէր :

(Շար.)

ՔԱՉ ՇՈՒՆ ՄԸ

Բարիգէն կը գրեն մեզ .

Անցած ուրբաթ առտու երկու ոստի-
կաններ իրենց սովորական շրջանը կը կա-
տախէին Ուրբի ջրանցքին մօտ , երբ շուն մը
գտան որ ցուկակապ և այլն չունէր :

Ռուսական գեղեցիկ քերծէ (թաղը) մըն
էր շիկագոյն մազերով : Արծաթեայ մանեակի
մը վրայ գրուած էր անունը «Տիմիգրի» բայց
տիրոջը հասցէն չկար :

Ոստիկանք բարակ չուան անցունելով
վիզէն սկսան պահականոց տանիլ :

Ռուսական շունը հլութեամբ կը հե-
տևէր , կերևի թէ շլացած էր ֆրանսական
համադգեստէն : Ի ճակատագիրը կը քաշէր
զայն դէպի այն տեղն , ուր անտէր շուները
խեղդամահ կ'ընեն :

Յանկարծ ոստիկանք մօտակայ ուրիշ ջը-
րանցի մը շուրջը մեծ բազմութիւն մը հա-
ւաքուած տեսան : Չուաններ եւայլն կը նետ-
ւէին ջրանցին մէջ . կին մը քրտաճմիկ ա-
ղաղակներ կ'արձակէր . «զաւակս , աղատե-
ցէք զաւակս» գոչելով :

Ինը տարեկան տղայ մը ջրանցն ինկած էր դիպուածով:

Ներկայից մին Հագուստներով ջուրը նետուեցաւ, բայց տղան որ բաւական մարմնեղ էր, փաթթուեցաւ անոր եւ այսպէս անգործութեան դատապարտեց իր ազատին: Երկուքն ալ վտանգի մէջ էին. ընդհանուր յուսահատութիւն կը տիրէր, երբ մոխրագոյն բան մը սրարշաւ անցաւ բաղմութեան մէջէն և ջրանցը նետուեցաւ:

«Տիմիթրի, ներ որ իր բնազդին հնազանդելով, վզին չուանը խզած և ջուրը նետուած էր:

Չուկի պէս ամենայն ճարպիկութեամբ լողալով հասաւ վտանգեալներուն և զանոնք եզերքին մօտեցուց, ուրկէջ աղատուեցան:

Ոստիկանք, բնականաբար նոյն միջոցին զբաղեցան օգնելու արկածելոց, երբ գործերնին աւտրտեցին, շուներ միտքերնին ինկաւ, բայց հոն չէր: Քաջ «Տիմիթրի» անյայտացած էր առանց շնորհաւորութեանց սպասելու և թէ՛ կեանքեր փրկած ու թէ՛ իր մորթն ազատած էր:

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

—o—

Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ Ը

Աշխոյժ էի ես դեռ երէկ,
Շատեր տային ինծի երնէկ.
Սակայն հիմայ դանդաղաբայլ՝
Պատեց հոգիս ամպ մը մուայլ:

Առողջ էի ու երջանիկ,
Երիտասարդ, համակ ծաղիկ.
Ոսկեզօծ էր իմ ապագան՝
Աստղ մըն էի լուսնի նըման:

Ափսո՛ս, ո՛րքան դժբաղդ եմ ես,
Բաղդը դարձուց ինծի երես.
Չուզեց ժպտիլ անկեղծ սիրով,
Առաւ ինձմէ կամք ու կորով:

Կորաքամակ աստ անդ շրջիմ,
Մինչև իջնեմ մահու շիրիմ.
Կը որոնեմ յուսոյ նշոյլ՝
Որուն կըղձայ մարմինս թոյլ:

Ինչո՞ւ արդեօք իմ կեանք նժդեհ,
—Ըղբացու՛մըս թէ եւ շատ վեհ,—
Սեւ գիշեր մ'է կարծես պատած՝
Եւ ուղեղս ալ ինձմէ թուած:

Չկայ երբէք հանգիստ ինծի,
Մարմինս մաշած, բեկբեկ հոգի.
Միշտ սիրելեացս քաշեմ կարօտ՝
Այրիմ սրտովս տխուր, տտրիտտ:

Երբ մտախեղ գիշերին մէջ,
Կ'այրէ մարմինս կրակ մ'անշէջ.
Երազիս մէջ յանկարծ տեսնեմ
Իմ «նաղելին» զոր կը պաշտեմ:

Վարդ այտերուն, սև յգնքերուն,
Հոգի կուտամ իր արեւուն.
Լուսին չունի երբէք իւր գեղ,
Այրած սրտիս լինի նա գեղ:

””

Ո՛հ, ինձ պէս շատ թշուառներ կան,
Ասա անդ ցրուած թափառական.
Թէ Տէր լսէ թշուառաց ձայն,
Յայնժամ պանդուխտն հրձուի իւր տան:

Օճա—Բազարաս

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Կոչիկները նոր եւ մաքուր պահել

Այն կոչիկները զորս երկարատեւ չպիտի գործածէք, կլիսէրինով ծեփեցէք, փոխանակ ձէթի կամ այլ իւղերու, որք կոչիկները կը ճաթուեն:

Առ Տիար Կ. Ա. Ի Սիլիսդրէ. — Թըզ-
թատարանի կնիքը Ձեր գրութեան վրայ դար-
նուելէն՝ այն կէտերը անընթեռնելի կընեն,
ուրիշ կը յառաջանան բառասխալովներ :



Տան մը մէջ.

Ամուսինը գրելով զբաղեր է. տիկինն
ալ երախայն զիրկը առած է որ սուր ճիշեր
կ'արձակէ .

Ամուսինը — Է՛, ինձի նայէ՛. ատ պզտիկը
իր ազմուկներովը արգելք կըլլայ ինձ գրելու :

— Անհոգ եղիք սիրելիս, ես հիմա եր-
գելով կը քնացնեմ զայն :

— Ի՞նչ, երգելով մի՛, ձիւնը գլխուս, եր-
կուքնիդ մէկ բերան՝ կուտուն կը դարձնէք
տունս, աւելի աղէկ է որ երախայն մինակ
իր ընդան շարունակէ :

— 0 —

Պանդոկի մը ճաշասրահին մէջ .

Յաճախորդ մը բարկութեամբ պատա-
ռաքաղը պնակին զարնելով . — Կա՛րսօն.

— Ի՞նչ կ'ուզէք, պարո՞ն :

— Աս ի՞նչ է. կերակուրիս մէջէն մլուկ
մը հանեցի :

— Ներեցէք, պարո՞ն, ես ալ առաւօ-
տուն ձեր անկողինին մէջէն ափ մը այդ ապ-
րանքէն ժողուեցի :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 23

Տակաւին լուծուած չէ : Պարգեւն է
«Գուշակ ապագայի», անուն գիրք մը :

Սիլիսդրէէն Տիար Կ. Ահաբի կը հա-
շտորդէ .

Բառահաւանքով

Մէջ, հատ, ըրէ, ո՛վ, ճանճ, որ է,
սու, թիւ, նու, եւ, յէջ, հատ, ա՛յ, փո-
խէ, ա՛, կան, շարէ, լաթ, ա՛յ, բնութիւն :

Լուծողին պարգեւն է Մանր Զուտրճա-
ւիք անուն գրքոյկ մը :

ԱԶԴ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԹՐԻԿ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ
երախայնելուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն
անոնց համար :

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր եւ կազմը վայելուչ :

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
2րդ. թաղ, Թիւ 1104:

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԳԵՍԻ

Այցետոմս, հասցետոմս. նամակա-
գլուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմ-
ոսի, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեգծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
բարութիւնք փութով կը կաաարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուիին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակող տետրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանգիմի:
Եւ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նա-
մակադրօ՞ւմ կ'ընդունուի: Կանխիկ:



ԳՈՒՇԱԿ

Ա. ՊԱՌԱՅԻ

Կամ՝ Զրուարձալի Բաղդադոյց
ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
րօտալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
գիմել մեր խմբագրութեան:

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԵՑԱՒ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԵԼԻ

ԿԱՄ

ՀԱՒԱԲԱԾՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ Ա. ԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆԲ

— 0 —

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժա-
մանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբա-
գրած, բաց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ
բողջնաթիւնոր երգեր:

Փափաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱԶԻԿԵԱՆ,
Արեւելեան տպարան, Զրդ. Ուշաթ թիւ 110 և ՎԱՌՆԱ.
Վառնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածնե-
րուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սան-
թիմ իւր բօթայի ծախք:

— 0 —

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

Մարտէն Ասլանի

Հին Գաղարմային զիմացը թիւ 218

Այս անգամ Եւրոպայէ բերել տուած
նոր մեքենաներով ընտիր լուսանկարներ կը
պատրաստէ, գոհացուցիչ գինով: Յաճախողք
գոհ պիտի մնան:

— 0 —

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Եւ Յուլարան

(ՊՈՒԼԿԱՐԻՍ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆԶՈՒԳ
Վառնա ճրգ. թաղ Եւրդ Թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շո-
գեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթայ գործիքներ, զրամական
գոսաններ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
նշր, տեսակ տեսակ րհաններ ևայլն ևայլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախողք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ

Печатница «Взaimнoстъ» — Варна.